ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-սեպտեմբեր)





2023թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 1 տրլն 658.4 մլրդ դրամ, ինչը 152.5 մլրդ դրամով կամ 10.1%-ով ավել է 2022թ. և 875.3 մլրդ դրամով կամ 111.8 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-օգոստոսի ցուցանիշից ավել է 378,7 մլրդ դրամով կամ 29.6 %-ով: 2023 թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 1140.5 մլրդ դրամ, ինչը 384.5 մլրդ դրամով կամ 50.9 %-ով ավել է 2022թ. և 697.8 մլրդ դրամով կամ 157.6 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-օգոստոսի ցուցանիշից ավել է 484 մլրդ դրամով կամ 73.7%-ով: 2023թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 517.9 մլրդ դրամ,ինչը 232 մլրդ դրամով կամ 30.9 %-ով պակաս է 2022թ. և 177.5 մլրդ դրամով կամ 52.1 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-օգոստոսի ցուցանիշից պակաս է 105.3 մլրդ դրամով կամ 16.9%-ով:

2023թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 4 մլրդ 264.3 մլն դոլար, ինչը 802.7 մլն դոլարով կամ 23.2 %-ով ավել է 2022թ. և 2 մլրդ 727.5 մլն դոլարով կամ 177,5 % -ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-օգոստոսի ցուցանիշից ավել է 1 մլրդ 354.3 մլն դոլարով կամ 46.5%-ով: 2023թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 2 մլրդ 933.9 մլն դոլար, ինչը 1 մլրդ 201.9 մլն դոլարով կամ 69.4 %-ով ավել է 2022թ. և 2 մլրդ 67.3 մլն դոլարով կամ 238.6%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-օգոստոսի ցուցանիշից ավել է 1 մլրդ 444.4 մլն դոլարով կամ 97 %-ով: 2023թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 1 մլրդ 330,4 մլն դոլար, ինչը 399.1 մլն դոլարով կամ 23.1 %-ով պակաս է 2022թ. և 660.2 մլն դոլարով կամ 98.5 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-օգոստոսի ցուցանիշից պակաս է 90.1 մլն դոլարով կամ 6.3%-ով:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**